

<https://doi.org/10.59982/18294359-25.1-rm-19>

Անահիտ Սերգեյի Աբրահամյան

Դոցենտ

ԵՊՀ, Դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման
ամբիոն

anahit.abrahamyan@ysu.am

Սյուզաննա Կարապետի Նավասարդյան

բ.գ.թ., դոցենտ

ԵՊՀ, Դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոն
s.navasardyan@ysu.am

Ռուզաննա Լեոնիդի Մելիքյան

ԵՊՀ, Դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոն
ruzanna.melikyan@ysu.am

Ամփոփագիր

Քաղաքական ելույթներն առաջնորդների, քաղաքական գործիչների համար եղել են և մնում են որպես ունկնդիրներին ոգեշնչելու, համոզելու, որոշակի քայլերի մղելու միջոց: Այդ ելույթները հաճախ գերազանցում են իրենց բուն համարեքստի շրջանակները՝ դառնալով մարդկային մղումների և ձգտումների հավերժական, ընդհանրական կոթողներ: Բացառությունը պետք է փնտրել նման ելույթներում քաղաքական հռետորաբանության և բանաստեղծականության միահյուսման մեջ: Խոսքի պարկերավորման այնպիսի միջոցների հմուտ օգտագործումը, ինչպիսիք են՝ փոխաբերությունը, կրկնությունը, ուրիշը, չափազանցությունը, անձնավորումը և այլն, հրապարակային ելույթը դարձնում են հուզական, հնչեղ, ոգեշնչող և հիշարժան:

Քաղաքականության և բանաստեղծականության փոխշաղկապվածությունը դարերի խորքից է գալիս. առաջնորդները գիտակցում էին, թե որքան հզոր է խոսքի ուժը՝ մարդկանց մոտ ցանկալի ընկալումներ ձևավորելու, նրանց որոշակի գործողությունների մղելու համար: Սկսած Կիկերոնի՝ Հռոմի սենատում իր արտաքսումից վերադառնալուց հետո արտասանած ելույթից (մ.թ.ա. 57թ.) մինչև Երկրորդ Համաշխարհայինի օրերին Ուինսթոն Չերչիլի հանրահայտ ճառերը հայտնի են անթիվ-անհամար այլ օրինակներ, երբ բանաստեղծականությունը օգնել է հռետորին՝ երկրի համար ճակատագրական պահին ժողովրդի մեջ միասնականության, արիության ոգի ներշնչելու, անհնարին թվացող խնդիրներ լուծելու, հաղթանակի հասնելու համար:

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Մեր ժամանակներում բանաստեղծականության դերը քաղաքական ելույթներում նույնքան կարևոր է, որքան անցյալում: Եթե հոեպորը իր ելույթում հմտորեն է գործածում խոսքի պատկերավորման միջոցները, նա կարող է հուզական, զգայական կապեր ստեղծել բազմաշերտ, անգամ այլախոհ ունկնդիրների հետ՝ կամրջելով որոշակի քաղաքական տարածայնություններ և արդյունքում դրդել նրանց համատեղ գործողությունների:

Հոգվածում ուսումնասիրվում են խոսքի պատկերավորման առանցքային միջոցները, որոնք գործածվում են հրապարակային ելույթներում, դիտարկվում են դրանց պատմական զարգացման միտումները, ազդեցությունը ունկնդիրների վրա: Քննվում և հաստատվում է այն ճշմարտությունը, որ քաղաքական ելույթում բանաստեղծականությունը շարունակում է մեծապես նպաստել պատմության ընթացքի ձևավորմանը և բնորոշել մեծ առաջնորդների ժառանգությունը:

Հիմնաբառեր: Հրապարակային ելույթ, պատկերավորման միջոցներ, բանաստեղծական հնչեղություն, խոսքի համոզականություն, ճարտասանական խոսքարվեստի ավանդույթներ

Ներածություն

Բանաստեղծականությունը քաղաքական ելույթում հզոր գործիք է՝ հավաքական գիտակցություն ձևավորելու համար: Անկախ նրանից՝ այն օգտագործվում է անցյալը փառաբանելու, որոշակի գործողությունների դրդելու, ապագայի տեսլականը ձևակերպելու համար, թե մեկ այլ նպատակով, խոսքարվեստի բանաստեղծական ոճը կարելի է համարել արդյունավետ քաղաքական հաղորդակցության հիմնաքարը:

Հռետորի ելույթում խոսքի պատկերավորման միջոցների հմուտ կիրառմամբ է պայմանավորված լսարանի կողմից ելույթի ընկալման աստիճանը, արձագանքը առաջնորդի ուղերձին: Բանաստեղծական լեզուն գրավում է ունկնդրի թե՛ սիրտը, թե՛ միտքը՝ ստեղծելով հուզական կապ հռետորի հետ: Այնպիսի հնարքների օգտագործումը, ինչպիսիք են՝ փոխաբերությունը, կրկնությունը, դիմքը և խոսքի պատկերավորման այլ միջոցներ, քաղաքական ելույթը դարձնում են հուզականորեն հիշարժան և ազդեցիկ, նպաստում են միասնականության զգացողության առաջացմանը. կապ է ստեղծվում առաջնորդների և լսարանի, վերացական տեսլականների և իրական գործողությունների միջև: Այն առաջնորդները, ովքեր վարժ տիրապետում են այս արվեստին, ձեռք են բերում ազդեցիկ գործիք, որի շնորհիվ նրանց խոսքը արձագանքում է հետագա սերունդների հոգիներում ևս՝ դառնալով արժեքավոր ժառանգություն:

Բանաստեղծական տարրերի օգտագործումը ճարտասանության մեջ նույնքան հին է, որքան ինքը՝ ճարտասանական խոսքը: Հին Հունաստանում և Հռոմում ճարտասանությունը համարվում էր և՛ արվեստ, և՛ գիտություն: Այսօր ևս նման մոտեցումը տեղին է և հիմնավորված: Ճարտասանությունը կարելի է սահմանել որպես գիտության յուրահատուկ ճյուղ (թերևս համադրական), քանի որ այն իր մեջ միավորում

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

է փիլիսոփայության, տրամաբանության, հոգեբանության, բարոյագիտության, լեզվաբանության, սոցիոլոգիայի հիմնարար դրույթներ, սկզբունքներ և մեթոդներ): Միևնույն ժամանակ հռետորի խնդիրն է ոչ միայն վեր հանել ուսումնասիրվող առարկայի, երևույթի բնութագիրը, սահմանումը, գնահատականը, ոչ միայն գտնել անհրաժեշտ և համարժեք հիմնավորում (փաստարկներ, մեկնաբանություն, լուսաբանում), այլև դրանք մատուցել խոսքի համոզականության, արտահայտչական, ներգործական մեծ ուժով: Վերջին հանգամանքը բերում է նոր պահանջ՝ մարդու (իբրև լսարանի) նկարագրի, նրա վարքի, հոգեկանի՝ բանական և հուզական ներաշխարհի հանգամանալի ուսումնասիրության հետ մեկտեղ՝ լեզվի, լեզվական միջոցների, արտահայտչաձևերի խորը իմացություն և հմուտ կիրառում, ինչը և պայմանավորում է այս ոլորտի կիրառական արվեստի բնույթը: [Վարդումյան, 98-99]:

Հունական դասական փիլիսոփայության խոշորագույն ներկայացուցիչներից մեկը՝ Արիստոտելը իր «Հռետորիկա» աշխատության մեջ մշակել է ճարտասանական խոսքարվեստի հիմունքները: Աշխատության երրորդ գիրքը նվիրված է հրապարակային ելույթներում գործածվող խոսքային արտահայտչամիջոցներին, որոնք հեղինակը մեկ առ մեկ մանրակրկտորեն ներկայացրել և վերլուծել է: [Corbett et. al., 156]: Ապշեցուցիչ փաստ է, բայց վերը նշված աշխատությունը ցայսօր համարվում է ճարտասանական խոսքարվեստին տիրապետել ցանկացողների լավագույն ուղեցույցը:

Հիշատակենք հին աշխարհի ականավոր դեմքերից ևս երկուսին՝ հին հռոմեական քաղաքական գործիչ, փիլիսոփա, նշանավոր հռետոր Կիկերոնին և աթենական պետական գործիչ, հռետոր և զորավար Պերիկլեսին, որոնք ճարտասանական խոսքարվեստում բանաստեղծականության նոր ուղենիշներ սահմանեցին:

Կիկերոնը, ով համարվում էր Հռոմի ամենամեծ հռետորներից մեկը, կատարելությամբ տիրապետում էր խոսքի արտահայտչամիջոցներին, ճարտասանության մեջ օգտագործվող բանաստեղծական տարրերին, որոնք նրա յուրաքանչյուր ելույթը դարձնում էին բացառիկ և հիշարժան: Ահա մի հատված իր՝ արտաքսումից հայրենիք վերադառնալուց հետո Սենատում արտասանած ճառից. «Եթե ես երախտագիտություն հայտնեմ ձեզ, հայր-սենատորներ, ոչ այնպիսի ամբողջական չափով, ինչպիսին պահանջում են ձեր անմահ ծառայությունները, որոնք դուք մատուցել եք ինձ և իմ հարազատներին, ապա խնդրում և աղերսում եմ, որ դա վերագրեք ոչ թե իմ բնավորության առանձնահատկություններին, այլ ձեր ողորմածության անսահմանությանը: Իսկապես, հնարավոր է արդյոք գտնել տաղանդների այնպիսի հարստություն, բառերի այնպիսի առատություն, այնպիսի աստվածային, ապշեցուցիչ հռետորական ձիրք, որ դրա միջոցով հնարավոր լինի ոչ միայն ընդգրկել մեր հանդեպ ձեր կատարած բոլոր ծառայությունները, այլ գոնե թվարկել դրանք: Չէ՞ որ դուք ինձ վերադարձրեցիք իմ թանկագին եղբորը, ինձ՝ խորապես սիրող եղբորս, մեր երեխաներին՝ իրենց ծնողներին, մեզ՝ մեր երեխաներին: Դուք մեզ վերադարձրեցիք մեր բարձր դիրքը, մեր կարողությունը, մեր բարի համբավը, մեր հզոր պետությունը, մեր

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

պաշտելի հայրենիքը, որից թանկ ոչինչ գոյություն չունի: Ի վերջո, դուք մեզ վերադարձրեցիք ինքներս մեզ» [OLL Publications: Cicero's Life and Politics]:

Պերիկլեսի դամբանականը, որը նա արտասանել է Աթենքում Պելոպոնեսյան պատերազմի օրերին, հիշարժան է ոչ միայն իր բովանդակությամբ, այլև բանաստեղծական բացառիկ հնչեղությամբ: Կարելի է ասել, որ այն ոչ այնքան դամբանական խոսք է, որքան ձոն՝ նվիրված հավերժական արժեքներին: Պերիկլեսը իր ելույթում օգտագործել է կենդանի պատկերներ և ռիթմ՝ ողջերին ոգեշնչելու և ընկած զինվորներին փառաբանելու համար՝ նրանց ինքնագոհաբերությունը համարելով Աթենքի ժողովրդավարության և դիմադրության մեծ պատմության կարևորագույն մասը [Smart Power Journal 4791]:

Ժամանակակից դարաշրջանում ևս բանաստեղծականությունը շարունակում է առանցքային դեր խաղալ քաղաքական ելույթներում: Այնպիսի գործիչներ, ինչպիսիք են՝ Աբրահամ Լինքոլնը և Ուինսթոն Չերչիլը, օրինակ, իրենց ելույթներում մեծ վարպետությամբ օգտագործում էին բանաստեղծական միջոցները՝ կերտելով ճարտասանական խոսքարվեստի փառահեղ նմուշներ: Աբրահամ Լինքոլնի Գեթիսբերգյան ուղերձը, որի ամբողջական տեքստը փորագրված է Վաշինգտոնում գտնվող Լինքոլնի հուշարձանի պատվանդանի վրա, ԱՄՆ Սահմանադրության և Անկախության հռչակագրի հետ միասին կազմում է Ամերիկայի ազատության հիմնասյունը: Ուղերձը տևել է երեք րոպե և դա բավարար է եղել, որպեսզի Լինքոլնը վերասահմանի պատերազմի նպատակը և վերահաստատի ժողովրդավարության իդեալները: Ահա այդ ուղերձն ամբողջությամբ. «Մեր հայրերը այս նոր մայրցամաքի վրա բնակություն հաստատելով՝ սկիզբ դրեցին մի նոր ազգի, որը տոգորված էր ազատության գաղափարներով և հավատում էր, որ բոլոր մարդիկ հավասար են: Ներկայումս մենք քաղաքացիական պատերազմի մեջ ենք: Սա մի փորձություն է՝ միտված պարզելու՝ արդյո՞ք այս ազգը կամ որևէ ազգ կարող է երկար ժամանակ դիմակայել: Մենք ելել ենք մարտի դաշտ, որի զգալի հատվածը ստիպված ենք տրամադրել իբրև մեր զոհերի վերջին հանգրվան: Նրանք տվել են իրենց կյանքը հանուն ազգի փրկության: Մենք այլևս չենք կարող թույլ տալ, որպեսզի նոր գերեզմանահորեր փորվեն այս հողի վրա: Մեր մարտիկները խիզախորեն կռիվ են տվել, և նրանցից ոմանք իրենց արյամբ են օծել այս հողը: Աշխարհը շատ շուտ կմոռանա մեր ասածները, սակայն ո՛չ նրանց սխրագործությունները»:

Նույն կերպ, Ուինսթոն Չերչիլի ելույթները Երկրորդ աշխարհամարտի ժամանակ մեծապես հիմնվում էին վառ պատկերների և ռիթմի վրա՝ հուսալքված ազգին ոգեշնչելու համար: «Մենք կպայքարենք ափերին» (“We shall fight on the beaches”) արտահայտությունը դարձել էր հավաքական հիշողության մի մասը՝ բրիտանացիներին համախմբելով նրանց ամենամռայլ պահերին: Չերչիլի ելույթների բանաստեղծական ոճը այդ ելույթները վերածում էր խիզախության և տոկունության կոչերի՝ ամրապնդելով նրա համբավը որպես պատմության ամենամեծ ռազմական առաջնորդներից մեկը: Հռետորը բացառիկ հմտությամբ էր գործածում խոսքի այնպիսի արտահայտչական

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

հնարքներ, ինչպես, օրինակ, մակդիրը, համեմատությունը, փոխաբերությունը, փոխանունությունը, չափազանցությունը, կրկնությունը, հակադրությունը և այլն: Այս առումով նրա հատկապես պատերազմական շրջանի ելույթներից յուրաքանչյուրը կարող է օգտագործվել որպես քաղաքական ելույթում բանաստեղծական խոսքի արտահայտչամիջոցների գործածման դասագրքային նմուշ:

Մերօրյա առաջնորդները իրենց հրապարակային ելույթներում հիմնականում պահպանում են ճարտասանական խոսքարվեստի լավագույն ավանդույթները: [St. John Anthony, 5]: Ժամանակակից քաղաքականության մեջ բանաստեղծական տարրերը շարունակում են մնալ որպես հիշարժան ելույթների հիմնաքարը՝ հաճախ օգտագործվելով լսարաններին ոգեշնչելու, միավորելու և մոբիլիզացնելու համար:

Բարաք Օբամայի ելույթները բանաստեղծական խոսքարվեստի տպավորիչ օրինակներ են: Որպես Ամերիկայի Միացյալ Նահանգների 44-րդ նախագահ՝ Օբաման հաճախ է ներառել փոխաբերություններ և ռիթմ իր ելույթներում՝ փոխանցելով հույսի, փոփոխության և դիմակայության գաղափարները: Ակնառու օրինակ է նրա կողմից օգտագործված փոխաբերությունը՝ «Բարոյական տիեզերքի աղեղը թեքվում է դեպի արդարություն» (“The arc of the moral universe bends toward justice”): Այս փոխաբերությունը շեշտում է առաջընթացի տեսլականը՝ ներկայացնելով արդարությունը որպես անխուսափելի արդյունք, միաժամանակ շարունակական գործողությունների կոչ անելով: Մեկ այլ օրինակ է նրա հրաժեշտի ելույթը, որտեղ Օբաման հայտարարել է. «Ժողովրդավարությունը կարող է կոտրվել, երբ այն ենթարկվում է վախին» (“Democracy can buckle when it gives in to fear”), ժողովրդավարությանը մարդակերպ հատկություն վերագրելով՝ հոետորը ընդգծել է վերջինիս փխրունությունը՝ դրա պաշտպանությունը համարելով համաժողովրդական պատասխանատվություն:

Բանաստեղծական միջոցներ կարելի է դիտարկել աշխարհի տարբեր առաջնորդների քաղաքական ելույթներում: Օրինակ՝ Նոր Զելանդիայի նախկին վարչապետ Զասինդա Արդերնը հաճախ օգտագործում էր փոխաբերություններ և էմպատիկ լեզու՝ արտահայտելու համերաշխություն ճգնաժամերի ժամանակ: Քրայսթեդերչի մզկիթի հրաձգությունից հետո Արդերնը՝ չարի հանդեպ դիմադրելու պատրաստակամությունը և միասնությունը ընդգծելու համար հայտարարել է. «Մեր սիրտը կոտրված է, սակայն մենք կոտրված չենք» (“We are broken-hearted, but we are not broken”):

Թեև ժամանակակից ելույթները հաճախ ավելի կարճ են և հարմարեցված ժամանակակից լրատվամիջոցների առանձնահատկություններին, բանաստեղծական սկզբունքները մնում են անփոփոխ: Այն առաջնորդները, ովքեր վարժ տիրապետում են ճարտասանական խոսքարվեստին, շարունակում են ձևավորել հասարակական կարծիքը և ոգեշնչելով դրդել գործողությունների՝ ապացուցելով, որ հնչեղ կարգախոսների դարաշրջանում ևս բանաստեղծականությունը քաղաքական ելույթներում արդիական է:

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Սակայն պետք է նշել, որ բանաստեղծականության ազդեցությունը միշտ չէ, որ դրական է: Նույն լեզվական հնարքները, որոնք ոգեշնչում և միավորում են, կարող են օգտագործվել նաև մանիպուլյացիայի և պառակտման համար [Громова, 23]: Հայտնի է, որ բռնապետական միտումներ ունեցող առաջնորդները օգտագործել են բանաստեղծական լեզուն հուզականորեն ազդեցիկ, բայց պառակտող պատումներ ձևավորելու համար՝ հիմնվելով վախի կամ նախապաշարմունքների վրա: Օրինակ՝ Ադոլֆ Հիտլերի ելույթները լի էին կրկնությամբ, փոխաբերություններով, ինչը նախատեսված էր ազգային պաթոս արթնացնելու և ենթադրյալ թշնամիներին մեկուսացնելու համար: Բանաստեղծականության նման ազդեցությունը ընդգծում է առաջնորդների բարոյական պատասխանատվությունը՝ լեզուն մտածված և կառուցողական ձևով օգտագործելու հարցում:

Եզրակացություն

Որպես եզրակացություն տեղին ենք համարում հիշատակել մի հատված Հրանտ Տեր-Աբրահամյանի հոդվածից, որում հակիրճ և դիպուկ ձևով ներկայացվում և հիմնավորվում է քաղաքական ելույթում բանաստեղծական խոսքին բնորոշ տարրերի բացառիկ կարևորությունը և ամփոփվում են սույն հոդվածում քննված դրույթները. «Կա քաղաքական և գեղարվեստական խոսքի նուրբ ընդհանրություն: Ընդ որում՝ խոսքը գեղարվեստական խոսքի առավել կազմակերպված ձևի՝ բանաստեղծականի մասին է: Ինչպես բանաստեղծության մեջ, քաղաքական խոսքում էլ միայն ուղիղ իմաստը չէ կարևոր, ավելին՝ շատ անգամ ուղիղ իմաստը միայն երկրորդական է:

Ե՛վ քաղաքական, և՛ բանաստեղծական խոսքում բացի ուղիղ իմաստից, կամ նույնիսկ առավել քան ուղիղ իմաստը, կարևոր են բազմաշերտությունը, բազմիմաստությունը, ենթատեքստերը, փոխաբերությունները, անսպասելի կապերը, թաքնված երանգները, մինչև վերջ չասվածությունը, բազմակետերը, հատուկ շեշտերը և այլն. մի խոսքով՝ սովորական, կենցաղային խոսքին հակադիր որակները՝ ավելի խիտ, ավելի բազմաթեւ, ավելի կազմակերպված, ամեն երանգին ուշադիր խոսքի կառուցումը: Սա պոլիտիկայի և պոետիկայի համընկնման դաշտ է՝ պոետապոլիտիկա կամ պոլիտիկայի պոեզիա» [Տեր-Աբրահամյան]:

Այսպիսով՝ քաղաքական ելույթներում բանաստեղծականությունը ոչ այնքան հռետորական խոսքում օգտագործվող զարդարանք է, որքան արդյունավետ առաջնորդության անկյունաքարը: Քանի որ հասարակությունները կանգնած են նոր մարտահրավերների առջև, բանաստեղծականությունը քաղաքական գործիչների, առաջնորդների համար կմնա որպես կարևոր գործիք՝ ելույթներում իրենց տեսլականը լավագույնս ձևակերպելու, ունկնդիրներին որոշակի գործողությունների մղելու, աննախադեպ բարդ աշխարհում տարաձայնություններն ու տարակարծությունները կամրջելու համար:

Գրականության ցանկ

1. Վարդումյան Ա.: Հռետորիկա շատերի և յուրաքանչյուրի համար: Երևան: ԵՊՀ հրատարակչություն, 2019, 341 էջ:
2. Edward P. J. Corbett, Robert J. Connors. Classical Rhetoric for the Modern Student. Oxford University Press, 1999, 562 p.
3. Громова Н. С. Видовые характеристики экстремистских текстов. Материалы международной научной конференции «Речевое воздействие в политическом дискурсе», Екатеринбург, 2016, 151 с.
4. Anthony St. John. Politics and the English Language. Italy, 2020, 20 p.
5. OLL Publications: Cicero's Life and Politics, <https://oll.libertyfund.org/pages/cicero-s-life-and-politics> , (March 10, 2025).
6. Фукидид. Речь Перикла над могилами воинов, <https://smartpowerjournal.ru/pericles/>, (10 Марта, 2025).
7. Տէր-Աբրահամյան Հ.: «Հրաժարիմք»-ը որպէս գրաքաղաքական սեռ. Գարնանային էլեգիայից մինչև աշնանային հովվերգություն. <https://hetq.am/hy/article/97289>, (10 մարտի, 2025):

POETICS IN POLITICAL SPEECHES

Anahit Abrahamyan

Associate Professor

YSU, Chair of Diplomatic Service and Communication

anahit.abrahamyan@ysu.am

Syuzanna Navasardyan

PhD in Philology, Associate Professor

YSU, Chair of Diplomatic Service and Communication

s.navasardyan@ysu.am

Ruzanna Melikyan

YSU, Chair of Diplomatic Service and Communication

ruzanna.melikyan@ysu.am

Abstract

Public speeches have always been and still serve as a vital tool for leaders and politicians to inspire, persuade, and mobilize audiences. These speeches often transcend the immediacy of their context, becoming timeless samples of human endeavor and aspiration. A key reason for this longevity lies in the integration of poetics into political rhetoric. The application of literary and rhetorical devices such as metaphor, repetition, rhythm, hyperbole, personification and others, makes public speeches highly emotional, sonorous, stimulating and memorable.

The interplay of poetics and politics can be traced back to ancient civilizations where leaders understood the power of language to shape perceptions and galvanize actions. From Cicero's speech delivered in the Senate after he returned from the exile to Winston Churchill's wartime orations,

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

history offers countless examples of how poetics has been used to inspire unity, courage, and resolve in moments of great significance.

In contemporary times, the role of poetics in political speeches remains as crucial as ever. If the orator makes a skillful use of rhetorical devices in his/her speech, they can forge emotional connections with diverse, even critical listeners, bridging certain political differences and urging them to take collective actions.

The article explores the key literary devices employed in political speeches and examines the tendencies of their evolution. Assessing the impact of public speeches on audiences, it is confirmed that they continue to shape the course of history and define the legacies of leaders and politicians greatly owing to the poetic elements and rhetorical devices skillfully used by orators.

Keywords: *Public speech, literary devices, poetic sonority, persuasive speaking, traditions of rhetorics*

Ներկայացվել է՝ 11.03.2025թ.

Ուղարկվել է գրախոսման՝ 22.04.2025թ.